Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոտայքի մարզի Վերին Պտղնի գյուղական համայնքի հաշվետու
համայնքային ժողովի

17 նոյեմբերի 2011թ. գ. Վերին Պտղնի

2011 թվականի նոյեմբերի 17-ին տեղի է ունեցել Վերին Պտղնի համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝
համայնքի ավագանու անդամներ

1. Արսեն Առաքելյան
2. Գենադի Բաղդասարյան
3. Յուրիկ Գասպարյան
4. Կարեն Մովսիսյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1. Յուրի Գևորգյան
2. Արման Զուրաբյան
3. Զեմմա Աբգարյան
4. Նարինե Ճառոյան
5. Մաի Հակոբյան
6. Լիանննա Մանվելյան
7. Զեմմա Գրիգորյան
8. Արթուր Գրիգորյան
9. Արտակ Ասատրյան

Համայնքի բնակիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարած աշխատանքների հանրային իրազեկման մասին:

զեկուցող՝ համայնքի ղեկավար Գ. Պողոսյան

ԼՍԵՑԻՆ

Հարգելի Վերին Պտղնի համայնքի բնակիչներ.

2010 և 2011թվականի տասն ամիսների ընթացքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

* 2010 թվականի հունվարի 27-ին համայնքի ավագանու թիվ N 6-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի 2010 թվականի բյուջեն՝ ըստ որի եկամուտները կազմել են 41522.2 ՀՀ դրամ

բյուջեն կատարվել է 91,2 % -ով:

* 2010 թվականի դեկտեմբերի 24 -ին ավագանու թիվ 66-Ն որոշմամբ հաստատվել է 2011 թվականի բյուջեն՝ ըստ որի եկամուտները կազմել են 19565,8 ՀՀ դրամ, բյուջեի եկամուտները կատարվել են 81,9 % ով:

* 2011 թվականին կատարվել է ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում, որի իրականացման համար ծախսվել է 5 435 900 ՀՀ դրամ,

* համայնքի փողոցների լուսավորության ապահովման գծով ծախսը կազմել է 426 000 ՀՀ դրամ,

* Համայնքում մանկապարտեզի շենք կառուցելու նպատակով ձեռք է բերվել հողատարածք՝ 10 730 000 ՀՀ դրամ արժողությամբ:

* Համայնքում կատարվել է աղբահանություն, որի համար ծախսվել է 2391 000 ՀՀ դրամ:

* Հայաստանի Հանրապետության Անկախության 20 ամյակի միջոցառումների իրականացման շրջանակներում ծախսվել է 800 000 ՀՀ դրամ:

* Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյա հոբելյանի կապակցությամբ համայնքի բյուջեից հատկացվել և ծախսվել է 150 000 ՀՀ դրամ:

* Համայնքի անապահով ընտանիքներից թվով 9 ուսանողների փոխանցվել է 800 000 ՀՀ դրամ որպես ուսման վարձ:

* Համանքի սոցիալապես անապահով թվով 8 ընտանիքների տրվել է 520 000 ՀՀ դրամ սոց. օգնություն:

* Մարտի 8-ի կապակցությամբ տրվել ֆինանսական օգնություն՝ համայնքի միակողմանի ծնողազուրկ երեխաների և անապահով ընտանիքների մայրերին, ինչպես նաև գյուղապետարանի կին աշխատակցուհիներին 240 000 ՀՀ դրամի չափով:

* 2011 թվականի ընթացքում իրականացվել է անվճար իրավաբանական խորհրդատվություն համայնքի բնակիչների համար:

* 2011 թվականին համայնք հրավիրված բժիշկ մասնագետների օգնությամբ բնակչության հետ անցկացվել է համապատասխան անվճար խորհրդատվություն՝ առողջապահության հետ կապված խնդիրների լուծման առումով և իրականացվել են անվճար բժշկական ստուգումներ:

ՈՐՈՇՎԵՑ

1. Հաշվետվությունն ընդունել ի գիտություն
2. Աշխատել մինչև տարեվերջ և բյուջեի կատարողականը հասցնել 100%-ի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ